ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 օգոստոսի 2018 թվականի N 224-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱԿԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1790-Ն որոշման 3-րդ կետի «ա» ենթակետով հաստատված N 1 հավելվածի 16-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների միջոցով իրականացվող աշխատանքների համակարգման նպատակով՝ **որոշում եմ.**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալների կողմից Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների գործունեության հետևյալ համակարգումը.

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ *Առնակ Ավետիսյան.*

ա. ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություն,

բ. կրթության, մշակույթի և սպորտի վարչություն,

գ. զարգացման ծրագրերի, գրոսաշրջության և վերլուծության բաժին,

դ. հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչություն:

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ *Վասակ Վարդանյան.*

ա. քաղաքաշինության վարչություն,

բ. գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն,

գ. տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչություն,

դ. զորահավաքային նախապատրաստության բաժին:

3) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ *Լարիսա Մաղոյան.*

ա. առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն,

բ. ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին,

գ. Արովյանի, Հրազդանի, Չարենցավանի և Եղվարդի սոցիալական աջակցության տարածքային գործակալություններ:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալներին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1790-Ն որոշման 3-րդ կետի «ա» ենթակետով հաստատված N 1 հավելվածի 16-րդ կետով նախատեսված գործառույթների իրականացումը:

3. Սույն որոշման 1-ին կետում չնշված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների *(բարբուղարություն, իրավաբանական բաժին, անձնակազմի կառավարման բաժին, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին, ներքին աուդիտի բաժին)* գործունեության համակարգում չի սահմանվում:

4. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2018 թվականի հուլիսի 3-ի *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների գործունեությունը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալների կողմից համակարգելու մասին»* N 173-Ա որոշումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թվականի օգոստոսի 16
ք. Հրազդան